ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ԱԼԱՎԵՐԴԻ համայնքի ավագանու հերթական (արտահերթ) նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների և այլ) վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ալավերդի	Ավագանու արտահերթ նիստ	24.11.2026թ.	15:00	Ալավերդու համայնքապետարան, նիստերի դահլիճ (ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8/1)

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԹԻՎ 16 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2026 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 16 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 244-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 նոյեմբերի 2026 թվական, N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 16 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 65-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2026 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 16 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝
   1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2026 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 16 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.
   1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 244-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 նոյեմբերի 2026 թվական, N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 244-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով,«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, 34-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 244-Ն որոշման հավելվածի 1, 2, 3, 4, 5, 6 հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն N 1, 2, 3, 4, 5, 6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
Ալավերդի համայնքի ավագանու
2026 թվականի նոյեմբերի 24-ի N -Ն որոշման

2025 ԹՎԱԿԱՆԻ 244 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ալավերդի համայնքի 2026 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի գումարը 624 063 000 ՀՀ դրամի փոխարեն սահմանել 645 879 000 ՀՀ դրամ:
2. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումը սահմանել 645 000 000 ՀՀ դրամ:
3. Համապատասխանաբար փոփոխություններ կատարել բյուջեի 1, 2, 3, 4, 5, 6 հավելվածներում: